ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-1994 ԹԹ.)

ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ

Բանալի բառեր - հայաստանյան մամուլ, Ղարաբաղ, ղարաբաղյան շարժում, մամուլի ձևավորում, հայ-ադրբեջանական հակամարտություն, տեղեկատվական-քարոզչական գործողություն, պատերազմական տեղեկատվություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային դարաշրջանի ավարտը նոր միջավայր ստեղծեց ոչ միայն քաղաքական կյանքում: Քաղաքական կարգերի ժողովրդավարացումով, լայն հրապարակայնությամբ, ժողովրդի հասարակական գիտակցության աճով և քաղաքացիական աննախադեպ ակտիվությամբ պայմանավորված՝ հայաստանյան մամուլը նոր իրավիճակում հայտնվեց: Որակապես նոր բովանդակություն ստացավ լրատվական դաշտը՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի համատեքստում: Գաղափարական սահմանափակումներն ու կուսակցական բռնատիրությունն իրենց տեղը զիջեցին խոսքի ազատությանը, ազատ մտածողությանը, թեև սկզբնական շրջանում անկախության հռչակումն էլ լիովին չնպաստեց ազատ մամուլի ձևավորման ընթացքին: Տպագիր մամուլը դադարեց զանգվածային լինելուց, թեկուզ այն պարզ պատճառով, որ տպագիր խոսքը գյուղ չէր հասնում: Բայց պատմական ճշմարտության պահանջը օրախնդիր էր, թեև ազատ մտածողության ալիքը դեռևս 1988-ին էր հասել Հայաստան և Արցախ: Ազատ մտածողությունը մեզանում նախ վերածվեց ազգային զարթոնքի՝ Արցախի ինքնորոշման գերագույն նպատակով, Սփյուռքի հետ մերձեցման գաղափարական սահմանափակումների վերացումով, հին ու նոր կուսակցությունների ազատ գործունեությամբ, և ապա փորձեց ներթափանցել հոգևոր ոլորտները: Մեծ հաշվով ժամանակը կանգնեց գաղափարական վերագնահատումների անհրաժեշտության առջև:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ - ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Մամուլի բովանդակային վերակառուցումը մեծ չափով պայմանավորված էր նաև այն տեղեկատվական-քարոզչական գործողություններով, որոնք զուգահեռաբար ընթանում էին թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում:

Ադրբեջանի տեղեկատվաքարոզչական համակարգը ներառում էր հետևյալ հիմնական սուբյեկտները.

1. Պետական իշխանության մարմիններ:

2. Պետական գիտահետազոտական կազմակերպություններ (Գիտությունների ազգային ակադեմիա, համալսարանական հանրություն): Նրանց հրապարակումները կրում էին պատմաքարոզչական բնույթ և հիմնականում կոչված էին հիմնավորելու Ադրբեջանի Հանրապետությունում ակտիվորեն կերտվող՝ Ադրբեջանի ու ադրբեջանցիների բնիկության, պատմության ընթացքում իրենց կողմից տարածաշրջանում խոշոր ժամանակաշրջաններ և տարածքներ զբաղեցնելու, թագավորություններ ունենալու մասին առասպելը: Այդ հրապարակումներում հիմնավորվում էին Հայաստանի տարածքի պատկանելությունը «Ադրբեջանի թագավորությանը», «Ադրբեջանի խանությանը», «պատմական Ադրբեջանին» և այլն, Ղարաբաղի ադրբեջանական ծագումնաբանությունն ու ադրբեջանական լինելը*:

3. Ոչ պետական կազմակերպություններ, հիմնադրամներ, վերլուծական կենտրոններ: Թերևս անկանոն գործող այս հաստատությունները հող էին նախապատրաստում տարիներ անց առավել ազդեցիկ և հեղինակավոր կազմակերպությունների ստեղծման համար:

4. Անհատական նախաձեռնություններ (առանձին անհատ նախաձեռնողներ՝ մտավորականներ, փորձագետներ, զինվորականներ և այլք): Մինչդեռ ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական-քարոզչական աշխատանքը չէր կրում համակարգային բնույթ, այն մինչ օրս էլ շարունակում է մնալ առանձին սուբյեկտների նախաձեռնությունների արդյունք և չի ընդգրկում հնարավոր մասնակիցների և ռեսուրսների մեծ մասը: Բացի այդ, ղարաբաղյան հակամարտության շուրջ տարվող հայկական տեղեկատվական-քարոզչական աշխատանքը եղել և հիմնականում շարունակում է լինել

* Վերոնշյալ հաստատություններն իրականացրել և շարունակում են իրականացնել պետական քարոզչության համակարգում հակահայկական տեղեկատվական պատերազմի վարման ժամանակ կիրառվող տեղեկատվական զինանոցի գիտական մշակումն ու հիմնավորումը, ինչպես նաև քաղաքական մարմիններին զուգընթաց՝ գիտակրթական հիմնարկներում, ԶԼՄ-ում և համացանցում հակահայկական տեղեկատվական պատերազմի վարումը:

արձագանքող, որի պայմաններում հարձակողական կողմ են մնում Ադրբեջանն ու ադրբեջանամետ սուբյեկտները:

Հայկական տեղեկատվաքարոզչական նախաձեռնությունները համակարգված չէին գործում, դրանք փորձում էին հակազդել ադրբեջանական քարոզչամեքենային համանման մեթոդներով, նաև իրականացնել սեփական շահերի պաշտպանությունն ադրբեջանական տեղեկատվական հոսքերի գնահատման, հեռանկարային և տեղային հակահարվածների միջոցով: Հայաստանյան լրատվամիջոցները մեծ մասամբ գործում էին կիսամասնագիտական սկզբունքներով, ստորադասված էին առանձին քաղաքական ուժերին և արտահայտում էին իրենց շահերը[1]: Ավելին՝ դրանցում ներգրավված էր ընդամենը մի քանի լրատվամիջոց, լրագրող և մտավորական: Վերջիններն ակտիվ հեղինակում էին հրապարակախոսական հոդվածներ, որոնք իրենց ուրույն տեղն ունեին մամուլի էջերում:

ԱՆԿԱԽ ՄԱՄՈՒԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

1991 թվականին անկախության հռչակագիր ընդունեց նախ Լեռնային Ղարաբաղը (սեպտեմբերի 2, 1991թ.), ապա՝ Հայաստանը (սեպտեմբերի 21, 1991թ.) Թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի համար պետության կազմավորման ճանապարհին անցնում էր պատերազմի միջով: Զուգահեռաբար բարդ ու պատասխանատու ճանապարհ էր անցնում նաև մամուլը, իսկ ազատ մամուլի ձևավորմանն ուղղված առաջին քայլերը աստիճանաբար ճանապարհ էին հարթում ազատ խոսքի համար:

Ակնհայտ է, որ Հայաստանում արդի մամուլի ձևավորումը մեծ լիցքեր ստացավ արցախյան ազատագրական շարժումից: Այդ շրջանում էր, որ բուռն ծաղկում ապրեց «ինքնահրատը», իսկ կուսակցական-խորհրդային մամուլի դիրքերը սասանվեցին: Ավելին՝ 1991-ին ընդունված «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքը ամրագրեց ձեռքբերումները (ամենամեծ առավելությունը գրաքննության վերացումն էր): Արդի հայ մամուլի սկզբնավորումը թեև լուրջ վեճերի խնդիր չի դարձել մեզանում, սակայն առկա է մի քանի կարծիք-տեսակետ: Որոշ տեսաբաններ կարծում են, որ «Մեր մամուլի պատմության նորագույն շրջանի սկիզբը իրավամբ 88 թվականն է… Թեև մեր իրականության ա-

[1] Տե՛ս **Աթանեսյան Ա.,** Համացանցը՝ որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ, «21-րդ Դար», 2013թ, N 6 (52), էջ 35-61, Երևան:

ռաջին անկախ պարբերականը՝ «Անկախություն»* թերթը լույս է տեսել 1987-ի հոկտեմբերի 24-ին», սակայն այն սոսկ ազատ մամուլի առաջնեկն է, մինչդեռ ինքնահրատ մամուլի բուն զարթոնքն սկսվեց 88-ի փետրվարին…»[1]: Նույն հեղինակը նորագույն հայ մամուլի պատմությունը բաժանում է երեք փուլի՝ ինքնահրատ (1987-1989), անցումային (1990-1991), ձևավորման (1992-ից մինչ օրս)[2]: Մեկ այլ հետազոտող անկախ լրատվամիջոցների ծնունդը համարում է 1991թ-ը[3], ուրիշներն էլ արդի մամուլի ծնունդը կապում են հանրապետության անկախացման հետ[4], չորրորդները սկիզբը որոնում են ինքնահրատների ակունքներում՝ նշելով, որ «Ազատ մամուլի առաջնեկը մեզանում եղել է 1987-ի մայիսին հիմնված «Աշոտ Նավասարդյանի և Ազատ Արշակյանի պաշտպանության կոմիտե»-ի երկլեզու (հայերեն և ռուսերեն) «Տեղեկագիրը»[5]: Ոմանք 1990-1992 թթ. ժամանակահատվածը համարում են հայրենական ԶԼՄ-ների ազատության «ոսկեդարը»[6], իսկ 1993-1994 թթ. ընդգրկող փուլը բնութագրում որպես մամուլի ազատության և բարոյականության նահանջի տարիներ, քանի որ «մամուլը չափազանց քաղաքականացավ և գռեհկացավ»:

Եթե Խորհրդային Հայաստանի պաշտոնական մամուլը չէր բացահայտում արցախցիների հիմնախնդիրը, համաժողովրդական պայքարի իսկական պատճառը, ապա անկախ Հայաստանի մամուլին էլ դա միանգամից չտրվեց. «Եթե կենտրոնական մամուլը փաստերը կողմնակալ էր ներկայացնում, կամ հավասարություն էր դնում հարևանների միջև կամ ավելի շուտ մեղադրում էր հայերին՝ մասնավորապես արցախցիներին, այս դեպքում թերթի տեղեկատվությունը զտված էր…»[7]:

---

* Հայաստանում առաջին (ԽՍՀՄ տարածքի՝ երկրորդ) ոչ պաշտոնական, անկախ շաբաթաթերթն է, որը բացահայտորեն ըմբոստացել է կոմունիստական ամբողջատիրության դեմ (առաջինը 1987թ. օգոստոսի 1-ից Մոսկվայում լույս տեսած՝ Ա. Պոտրաբինեկի «Էսպրես խրոնիկս» շաբաթաթերթն էր): «Անկախությունը» սկզբնական շրջանում լուսատիպ էր, ապա՝ պատճենահանված:

[1] **Հայրապետյան Ն.,** Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի 1987-1996թթ., Երևան, 1990թ. էջ 7:

[2] Նույն տեղում, էջ 9:

[3] **Գասպարյան Ա.,** Հռոմեական կայսրությունից մինչև ժամանակակից ժողովրդավարություն, Երևան, 1997թ., էջ 3:

[4] **Եազըճեան Գ.,** Հայաստանի պարբերական մամուլը 1997թ. առաջին քառամյակին, Երևան, 1997թ., էջ 3:

[5] **Անանյան Գ.,** Արդի հայ մամուլի լույսն ու ստվերը, Երևան, 2001թ., էջ 7:

[6] **Եազըճեան Գ.,** նշվ. աշխ., էջ 14:

[7] **Ավագյան Ս.,** Արցախ. ինչու՞ չի ասվում ճշմարտությունը, Երևան, 1991թ., էջ 3:

Շարժումը, որ պատերազմական գործողությունների փուլում էր և վերածվել էր հայ-ադրբեջանական հակամարտության*, համապատասխան լրատվական քաղաքականություն էր ենթադրում թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր մամուլի օրգանների համար: Ըստ այդմ՝ ակնհայտ էր դառնում անկախ Հայաստանի մամուլի դիրքորոշումը ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ, քանի որ քաղաքական իրավիճակն իր ազդեցությունն ուներ մամուլի վրա:

1991 թ. վերջերին և 1992 թ. սկզբներին Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանում իշխանության եկան երեք տարբեր գաղափարախոսություններ կրող ուժեր: 1990 թ. օգոստոսից Հայաստանի կառավարումն իրականացնում էր Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ-ն): Չճանաչված Լեռնային Ղարաբաղում 1991թ. դեկտեմբերի 28-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության եկավ ՀՅԴ-ն:

Հայաստանի և Արցախի համար ծանր ու վճռական շրջան էր 1992 թվականը՝ հենց տարեսկզբից, քանի որ հունվարի 10-ից Ստեփանակերտը կրակի տակ էր, «ապրում էր նկուղներում»[1], լայնածավալ հարձակումների էր ենթարկվում ողջ Արցախը, գիշերներն անցնում էին զանգվածային հրետանակոծության պայմաններում, ամեն օր նոր զոհերի անուններ էին հայտնում: Դժվարություններ հաղթահարելու առաջ էր կանգնած նաև հայաստանյան մամուլը, առաջին հերթին ոչ թե բովանդակային առումով, այլ հերթական անգամ բարձրանում էին ծախսերի, թղթի, տարածման ու սպառման գները. «մամուլի ազատության այս պայմաններում, որին ձգտել և հասել ենք այսքան երկար տասնամյակներ հետո, մեզ սպառնում է մամուլի լռությունը»[2], մինչդեռ հեղինակություն ունեցող թերթերն իրենց ներգործությունը կարող են ունենալ զարգացող իրադարձությունների վրա:

Պաշտոնական մամուլը կիսաձայն տեղեկություններ էր հաղորդում ռազմի դաշտից, պաշտոնական տվյալներ ներկայացնում վիրավորների և զոհերի մասին[3]: Միապաղաղ լրահոսում երբեմն-երբեմն էր հայտնվում «-Պատերազմի իրական դեմքը»[4]: Ինչպես պաշտոնական հայտարարությունները, որոշումները, այնպես էլ պատերազմական տեղեկատվությունը «Հայաստանի Հանրապետություն»-ը ներկայացնում էր առանց սեփական մեկնաբանությունների, լրագրողական աշխատանքի: Որպես իշխանա-

---

* Ցանկացած պատերազմ կամ հակամարտություն ուղեկցվում է նաև տեղեկատվական գործողություններով. բացառություն չէ նաև հայ-ադրբեջանական հակամարտությունը:

[1] **Բալայան Զ.,** Դժոխք և դրախտ, Երևան 1995թ. էջ 29:

[2] «Հայաստանի Հանրապետություն», 13 փետրվարի, 1992թ., Երևան:

[3] «Հայաստանի Հանրապետություն», 21 հունվարի, 1992թ., Երևան:

[4] «Հայաստանի Հանրապետություն», 31 հունվարի, 1992թ., Երևան:

մետ լրատվամիջոց՝ թերթը, հետևելով դասական լրագրության սկզբունքներին, նախընտրում էր նյութերի մատուցման զուսպ և հավասարակշիռ ոճը՝ հենվելով հիմնականում լուրի և հաշվետվության, երբեմն՝ հարցազրույցի ժանրերի վրա: Քանակական առումով Արցախից ստացվող լուրերը շատացան, բայց բովանդակային տեսանկյունից շարունակում էին մնալ նույնը. դրանք հիմնականում արտատպումներ էին արևմտյան լրատվամիջոցներից, և «Արմենպրես»[1], երբեմն նաև «Նոյյան տապան»[2] լրատվական գործակալությունների հաղորդագրություններն էին:

Այդ առումով ընդդիմադիր մամուլի տեղեկատվության աղբյուրների շրջանակն ընդլայնվում էր, գրում էին ոչ միայն թերթի սեփական կամ հատուկ թղթակիցները, այլև տեղեկություններ էին տպագրվում տարբեր տեղեկատու կենտրոններից, «Ինտերֆաքս», «Սնարք», «Ռոյթեր» լրատվական գործակալություններից, միջազգային հեղինակավոր պարբերականներից և այլն: Իբրև հակակշիռ պաշտոնական մամուլին՝ ընդդիմադիրն ահազանգում էր երկրում ստեղծված տագնապալի իրավիճակի մասին՝ ստեղծելով «Արցախ» մշտական խորագիրը[3], որն ուներ իր գրեթե անփոփոխ և կայուն տեղը թերթի լրատվական տարածքում: Ավելին՝ ներկայացվում էին ոչ միայն տեղեկատվական, երբեմն վերլուծական նյութեր, այլև գրական գործեր՝ հայրենասիրական բանաստեղծություններ, համառոտ ակնարկներ, որոնք առնչվում էին ղարաբաղյան հիմնահարցին ու շարժման դասերին: Նման հրապարակումները, եթե դրանք վերաբերում էին նույնիսկ Հադրութի և Մարտունու դիրքերի հրետակոծությանը[4], որպես կանոն, առանձնանում էին յուրահատուկ ոգով և պայքարի ու հաղթանակի մղող ուժով: Հուսահատ տրամադրությունները, անգամ եթե դրանք հարցազրույցներ էին վիրավոր ազատամարտիկների հետ,[5] լրահոսում տեղ չունեին:

Հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում մամուլը ներկայացնում էր նաև ԼՂՀ-ի տարբեր շրջաններում գտնվող հայկական պատմական հուշարձանները[6], զրույցի հրավիրում մասնագետների, մտահոգություն հնչեցնում, թե «Արցախում և հանրապետությունում տեղի ունեցող տագնապալի իրադարձությունների մասին հեռուստալրատ-

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 1 ապրիլի, 1993թ., Երևան:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 6 մայիսի, 1993թ., Երևան:
[3] «Ազատամարտ», 1 հունվարի, 1992թ., Երևան:
[4] «Ազգ», 4 մայիսի, 1993թ., Երևան:
[5] «Ազատամարտ», 16 ապրիլի, 1992թ., Երևան
[6] «Ազատամարտ», մայիս-հունիսի, 1992թ., Երևան:

վությունը ճշմարիտ տեղեկություններ չի տալիս»[1] և այլն, մինչդեռ «Մեր սահմաններում հայրենասիրության, պատվի և ուժի փորձություն էր»[2]:

Ըստ էության՝ իրականության հատվածային անդրադարձը հայաստանյան պաշտոնական և իշխանամետ մամուլի առանձնահատկություններից էր, և այդ երևույթն ակնառու էր, երբ խոսքը հատկապես քաղաքական գործընթացների մասին էր: Այդ առումով հարկ է արձանագրել, որ հայաստանյան պարբերականները խուսափում էին իրենց ներգործությունն ունենալ զարգացող իրադարձությունների վրա կամ դա անում էին չափազանց զգուշավոր, մինչդեռ հեղինակություն ունեցող թերթերը, որպես կանոն, ունեն այդ հնարավորությունը:

Թեև «Հայ-ադրբեջանական լրատվական պատերազմը նոր փուլ թևակոխեց»[3], սակայն Հայաստանում իրավիճակը չփոխվեց նաև հետագայում, ավելին՝ հաղթանակը համախմբող ուժ չդարձավ մամուլի համար: Խոսքն այս դեպքում Շուշիի և Լաչինի ազատագրման մասին է: 1992-ի մայիսին, հիմնականում ավարտելով Ղարաբաղի ներսում ադրբեջանական կրակակետերի ոչնչացումը, ինքնապաշտպանական ուժերը ծրագրեցին և իրականացրին Շուշիի ազատագրման օպերացիան: Դրանով ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը Ստեփանակերտը փրկեցին ամենօրյա ծանր ռմբահարումներից: Մի քանի օր անց ինքնապաշտպանական ուժերը գրավեցին նաև Լաչինը՝ լռեցնելով մի շարք այլ կրակակետեր ևս: Շուշիի ազատագրության մասին լուրն առաջինը հայտնեց «Երկիր»-ը հենց մայիսի 9-ի համարում՝ գրելով «Լույս 9-ի ժամը 2:30 տվյալներով քաղաքն ազատագրվել է»: Թերթի թղթակիցը դեռ կեսգիշերին էր կապվել ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի և ՀՀ ՊՆ Վ. Մանուկյանի հետ, ճշտել մանրամասներ, գրառել քաղաքն ազատագրած մի քանի մարտիկների խոսքեր[4]: Իսկ հաջորդող համարներում թերթը հետևողականորեն անդրադարձավ ազատագրման մանրամասներին, ներկայացրեց Շուշիի ազատագրման գործողությունների սխեմատիկ քարտեզը[5], տպագրեց լուսանկարներ բերդաքաղաքի բարձունքից («ԼՂՀ մայրաքաղաքը մի քանի տարի այստեղից լուսանկարել հնարավոր չէր»[6] մակագրությամբ): Իսկ ՀՀ ԳԽ պաշտոնաթերթը՝ «Հայաստանի Հանրապետություն»-ը հաղթանակի լուրն աննշան և ուշադրություն չգրավող տե-

---

[1] «Ազատամարտ», 19-25 հունիսի, 1992թ., Երևան:
[2] «Ավանգարդ», 20 մայիսի, 1993թ., Երևան:
[3] «Ազատամարտ», 15 ապրիլի, 1992թ., Երևան:
[4] «Երկիր», 9 մայիսի, 1992թ., Երևան:
[5] «Երկիր», 12 մայիսի, 1992թ., Երևան:
[6] «Երկիր», 15 մայիսի, 1992թ., Երևան

ղում տպագրեց: Այդ օրերին Թեհրան կատարված Հայաստանի պաշտոնական պատվիրակության այցի մանրամասների կողքին հայտնվեց «Արմենպրես»-ի հաղորդագրությունը, ըստ որի «Ինքնապաշտպանության ուժերը մտել են Շուշի»[1]: Միայն օրեր անց թերթի 3-րդ էջում հայտնվեց տեղեկատվություն, որ «Շուշին լիովին գրավելուց հետո վերահսկվում է քաղաքը»[2]. ազատագրման մանրամասներին այդպես էլ թերթի ընթերցողները հնարավորություն չունեցան ծանոթանալ: Փոխարենն անգամ երգիծաթերթը արցախյան ժպիտներով նշեց, որ «Կրկին ապացուցեց Շուշին, որ պետք է ապավինել ուժին…»[3]: «Ավանգարդ»-ում Շուշիի ազատագրման լուրը հերթական «Հաղորդագրություն»[4] էր, իսկ Լաչինի դեպքում՝ «Կյանքի ճանապարհը բաց է»[5]: «Երեկոյան Երևան»-ը ևս ըստ արժանվույն չարձագանքեց Շուշիի, Լաչինի միջանցքի ազատագրմանը, մինչդեռ այդ կերպ «Արցախը միացավ Մայր Հայաստանին»[6]:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողությունները վերածվեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ անշրջելի: Շուշիի հաղթանակով և Լաչինի միջանցքի բացմամբ ավարտվեց ԼՂՀ անկախության համար պայքարի առաջին փուլը: Ղարաբաղյան հիմնահարցը լուսաբանելու տեսանկյունից նոր փուլ նախանշվեց նաև հայաստանյան մամուլի համար, քանի որ խնդրի լուծման ուղիների որոնումները ստացան միջազգային բնույթ, իսկ ԼՂՀ-ի հայության և Ադրբեջանի հակամարտությունից սկիզբ առավ գոյապայքար: Հետևաբար պատերազմական ծանր իրավիճակը չէր կարող լուրջ դժվարությունների առաջ չկանգնեցնել նաև հայաստանյան մամուլը: Այդ առումով 1993-1994թթ. թերևս, ամենադժվար շրջանն էր. այդ տարիներին իրենց գործունեությունը հիմնականում կարողացան շարունակել միայն այս կամ այն կառույցից կախյալ, ֆինանսական և տեխնիկական միջոցներ ունեցող պարբերականները: Էներգետիկ ճգնաժամի պատճառով արդյունաբերական հիմնարկներն անգործության մատնվեցին, այդ թվում՝ որոշ տպարաններ, միաժամանակ խախտվեց թերթերի թողարկման պարբերականությունը, գներն ու ծախսերը շատացան և ինքնածախսածածկման հնարավորությունը վերացավ: Այդ շրջանում տեղի ունեցավ մամուլի տպաքանակի կտրուկ նվազում, թերթերը շարունակեցին տեղեկատվական աղբյուր մնալ սահմանափակ լսարանի համար:

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 9 մայիսի, 1992թ., Երևան:
[2] «Հայաստանի Հանրապետություն», 12 մայիսի, 1992թ., Երևան:
[3] «Ոզնի», 30 մայիսի, 1992թ., Երևան:
[4] «Ավանգարդ», 12 մայիսի, 1992թ., Երևան:
[5] «Ազատամարտ», 22-28 մայիսի, 1992թ., Երևան:
[6] «Երկիր», 19 մայիսի, 1992թ., Երևան:

Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, ժողովրդավարության հաստատումը լուրջ տեղաշարժ էր մամուլի միակենտրոն ղեկավարման համակարգում: Արտահայտվելու ազատության հաստատումը, որն առաջնային նշանակություն ուներ գաղափարական պայքարում, պայմանավորեց մամուլի բովանդակային վերակառուցումը:

1991 թ. տարեվերջից սկսած ԼՂՀ-ի հայության և Ադրբեջանի հակամարտության հիմնահարցից տրամաբանորեն սկիզբ առնող գոյապայքարը ձեռք բերեց դասական պատերազմին հատուկ բոլոր հատկանիշները. հաղթանակներ և կորուստներ, խաղաղ բնակչության տեղահանում և ոչնչացում, շրջափակում, բռնագաղթ, տարածքների գրավում, նորագույն ռազմական տեխնիկայի կիրառում, զոհեր և վիրավորներ, ռազմագերիներ, պատանդներ, անհայտ կորածներ և «հարկադիր կանգառում հայտնված մամուլ»[1]՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԼՂ հակամարտությունը ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար հետխորհրդային միջավայրում, ըստ էության, առաջին փորձությունն էր: Ղարաբաղյան պատերազմի լուսաբանումը հայաստանյան ԶԼՄ-ներում (մասնավորապես՝ մամուլում) որոշակի թափ ստացավ հենց 1992 թվականից, թեև մամուլն ուղիղ ազդեցություն չունեցավ այդ շարժման վերելքի վրա՝ անուշադրության մատնելով կարևոր երևույթներ: Շարժումն ու պատերազմը ակտիվորեն չէին շրջանառվում մամուլում, փոխարենն առավելապես հայաստանյան ներքաղաքական կյանքն էր ներկայացվում: Զգտելով փոքրիկ հաղթանակներ գրանցել նաև տեղեկատվական պատերազմում՝ հայ լրագրողները, պահպանելով նյութի մատուցման որոշակի սկզբունքներ, փորձում էին թաքցնել հուսահատությունը և ընթերցողներին պատմել հերոսների ու նրանց կերտած հաղթանակների մասին[2]՝ հիմնականում ստվերում թողնելով հայ փախստականների, և ընդհանրապես պատերազմի դաժանությունների մասին տեղեկատվությունը:

1992 թ.-ից որոշ հայկական թերթեր ունեին սեփական թղթակիցներ Լեռնային Ղարաբաղում (Վահրամ Աղաջանյան «Ազգ», Վարդան Դնրիկյան, Գրիգոր Բաբայան «Երկիր», Նորայր Մարության «Ազատամարտ» (նա զոհվեց Ղարաբաղում, 1992 թվականին) և ուրիշներ): ԽՍՀՄ փլուզումից հետո հակամարտության գոտում աշխատող լրագրողները ձեռք բերեցին նոր մասնագիտացում, որը դեռ չէր ստացել էքստրեմալ ժուռնալիս-

[1] «Ավանգարդ», 2 մարտի, 1993թ., Երևան:

[2] «Ազատամարտ», օգոստոս, 1992թ., Երևան:

տիկա անվանումը, հետևաբար նոր ժանրում աշխատելու փորձառություն և հմտություն ոչ ոք չուներ: Եվ հենց տերմիններն էլ՝ հակամարտության գոտի, մարտական գործողությունների շրջան, շփման գիծ և այլն, հայտնվեցին շատ ավելի ուշ[1]:

Քաղաքական և ռազմական իրավիճակով պայմանավորված լրագրության խնդիրներն էլ այլ էին, թեև փաստի առկայությունը շարունակում էր մնալ կարևորագույնը՝ թեկուզ կրակահերթի տակ: Աշխատանքային տարրական պայմանների, առավելապես՝ կապի բացակայության պատճառով հաճախ լրագրողների հավաքագրած տեղեկատվությունը մարտական հերթական գործողության վերաբերյալ ընթերցողին հասնում էր բավական ուշ, այն ժամանակ, երբ արդեն ավարտվել էր տվյալ մարտը և գրանցվել էր պարտություն կամ հաղթանակ: Փաստորեն, լրագրողներն ըստ էության ազատ էին տեղեկատվության հավաքագրման գործում, բայց լուրջ խոչընդոտների առաջ էին կանգնում այն տարածելու հարցում: Նման դեպքերում լրագրողները հայտնվում էին վիրավորներ կամ զոհվածներ տեղափոխող ուղղաթիռներում: Պատահական չէ, որ նման իրավիճակներում հայ լրագրողներն իրենց մարտիկներ (լրագրող ազատամարտիկ) էին համարում, ովքեր պայքարում էին զինվորական համազգեստով և մասնագիտական զենքով[2]:

90-ականների ռազմական ակտիվ գործողությունների երեք տարիների ընթացքում հակամարտության կողմերը տվեցին 25-30 հազար զոհ, շուրջ 100 հազար վիրավոր: Փախստականների և տեղահանվածների ընդհանուր թիվն անցավ մեկ միլիոնը[3]: Այս պատերազմում բավական թանկ գին վճարեցին հակամարտող երկու կողմերն էլ: Երկու հարևան ժողովուրդներին, նրանց ղեկավարներին չհաջողվեց խուսափել արյունահեղությունից, զանգվածային տեղահանումներից, բնակավայրերն ավերելուց[4] և միմյանց հանդեպ խորացող ատելությունից: Այս իրավիճակում իրենց՝ ոչ պակաս կարևոր դերակատարումն ունեցան ԶԼՄ-ները և լրագրողները՝ ճակատի երկու կողմերում էլ: Ակնհայտ է, որ ԶԼՄ-ները (տվյալ դեպքում՝ մամուլը) անվիճելի նշանակություն ունեն ինչպես ազգամիջյան կոնֆլիկտների սրման, այնպես էլ դրանց կարգավորման հարցում: Հաճախ փորձելով փաստերը հասցնել լսարանին՝ լրագրողները անզգուշություն են ցուցաբերում ընտրված բառի, լուսանկարի, վերնագրի, ժանրի առումով: Գիտակցելով տեղեկատվության հաղորդման անհրաժեշ-

---

[1] ««Журналисты на войне в Карабахе», Մոսկվա, 2002թ., էջ 24:

[2] Նույն տեղում, էջ 58:

[3] **Հակոբյան Թ.** նշվ. աշխ., էջ 12:

[4] Նույն տեղում:

տությունը՝ ցավոք, մամուլը միշտ չէ, որ կատարում է իր գլխավոր առաքելությունը: Այս դեպքում ինչպես լռությունը, այնպես էլ անզգուշորեն ասված բառը հղի են վտանգավոր հետևանքներով:

Հայ ժողովրդի նորօրյա պատմության ամենաճակատագրական և ամենաբարդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ տեղի ունեցող իրադարձություններին շատ դեպքերում համարժեք չէր հայաստանյան մամուլի, լրագրողների արձագանքը՝ հատկապես սկզբնական շրջանում: Այդուհանդերձ, լրագրողները կատարեցին իրենց աշխատանքը, ինչ-որ չափով քաղաքական գործիչների սխալները կրկնող, բայց դրա նպատակը չափազանց կարևոր էր՝ ընթերցողներին հասցնել տեղեկատվություն պատերազմի մասին: Գուցե դա նրանք արեցին ավելի կամ պակաս չափով, բայց դա նաև արվեց 5 լրագրողի կյանքի (Սերգեյ Համբարձումյան (զոհվեց 1992թ. փետրվարի 28-ին), Ալեքսանդր Գասպարյան (զոհվեց 1991թ. դեկտեմբերի 3-ին), Արամ Զախարյան (զոհվեց 1992թ. հունիսի 30-ին), Նորայր Մարության (զոհվեց 1993թ. հունվարի 19-ին), Արմեն Սարգսյան (զոհվեց 1993թ. հոկտեմբերի 10-ին) և 6 վիրավոր[1] լրագրողների բեկված ճակատագրերի գնով:

Анна Мкртичян. Формирование независимой прессы Армении в условиях армяно-азербайджанского конфликта (1991-1994 гг.) - Постсоветская армянская пресса, по сути, является потомком советско-армянской прессы, естественно, с новыми чертами, вытекающими из требований времени. Первые попытки создания независимой печати в новой независимой республике совпали с войной и политически нестабильной обстановкой, что не могло не сказаться на контент печати. Боле того, в газетах преобладали нетерпимые настроения.

Отдельные проявления информационно-пропагандистской деятельности появились в армянской прессе. А так как информационно-пропагандистская работа РА и НКР не носила системного характера, то армянская пропагандистская работа по конфликту была в основном в роли ответчика, поэтому армянская пресса действовала на полупрофессиональной основе, подчиняясь отдельным политическим силы, выражающие собственные интересы.

Более того, если в советские годы пресса выступала против национального содержания, придерживаясь политики «дружбы народов», то конец советской эпохи создал для армянской прессы новую среду, в том

[1] «Журналисты на войне в Карабахе», Մոսկվա, 2002թ., էջ 155:

числе возможности переосмысления «национального содержания»". После обретения Арменией независимости медиаполе получило качественно новое наполнение в контексте нагорно-карабахской проблемы. Идеологические ограничения и диктатура партии уступили место свободе слова, свободомыслию, и даже первоначальное провозглашение независимости не в полной мере способствовало формированию свободной прессы.

Anna Mkrtichyan. Formation of independent Armenian's press in the context of Armenian-azerbaijan conflict (1991-1994) - The post- Soviet Armenian press is, in fact, the next of the Soviet-Armenian press, naturally, with new features emerging from the demands of the time. The first attempts to create an independent press in the newly independent republic coincided with the war and the politically unstable situation, which could not but affect the content reconstruction of the press. Intolerant moods prevailed in the press.

Separate manifestations of information-propaganda activities appeared in the Armenian press. And as the information-propaganda activity of the RA and NKR was not systemic and Armenian propaganda was mainly in the role of a respondent, therefore the Armenian press acted on a semi-professional basis, subordinated to separate political forces, expressing its own interests.

Moreover, if during the Soviet years the press acted against the national content, adhering to the policy of "friendship of nations", then the end of the Soviet era it was created a new environment for the Armenian press, including opportunities for reinterpretation of the "national". After the independence of Armenia, the media field received a qualitatively new content in the context of the Nagorno Karabakh issue. Ideological restrictions and party dictatorship gave way to freedom of speech, free thinking, and the initial declaration of independence did not fully contribute to the formation of free press.

Ուղարկվել է խմբագրություն 04.03.2022թ.
Գրախոսվել է 04.03.2022թ.